


Մ Ի Օ Ս

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՅԳԸՅԻՆ, ԻՆԸՍԻՐԸՆԵ, ԳԻՐԳԻՏԸԿԸՆ
ԵՒ ԲԸԳԸԲԸԿԸՆ



ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐԳՆ ՄԻՆԵՐՈՅ



ՅԵՐՈՒՍԸԳԼԻՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1868



ԵՐԲՐԻՒՄ ՏԱՐԻ
ԹԻՒ 10.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՀՈԿՅԵՄԲԵՐ 31
1868.

ԸՋԳԸՅԻՆ, ԲԸՆԸՍԻՐԸԿԸՆ ԵՒ ԳՐԸԳԻՏԸԿԸՆ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Նախաշարժ. — Ա. Կրկումբիան ըստ
բռնի նշանակութեան. — Բ. Լրտման կամ
արքայանի կրկումբիան. — Գ. Քրիստոսեան
կրկումբիան իբրեւ զաստիարակիչ. — Դ. Քրիս-
տոսեան կրկումբիան իբրեւ հաստատիչ կրկումբիան.
— Ե. Հեղեղեան կրկումբիան. — Զ. Ոստանայա-
կան Վարժարան:

ՆԵՒԸՇԱՒԻՂ

Քանի մի տարիներէ ՚ի վեր բաւա-
կանին կը խօսուի եւ կը գրուի մեր Մէ-
գին մէջ կրթութեան եւ դաստիարա-
կութեան վրայ, որով յայտնի կ'երե-
ւի, թէ տգիտութեան կորստաբեր
հետեւանքները եւ ըւստաւորութեան

փրկարար սկզբունքները զգալի եղած
են: Այս շարժումն, ըստ երեւութիւն,
բաւական միջթարական է եւ յու-
սադրական եւ ամենայն շնորհակալու-
թեան արժանի են այն անհատները,
որոնք թէ մասնաւոր հրատարակու-
թեամբ եւ թէ ազգային պարբերա-
կանաց միջոցաւ դաստիարակութեան
կենտական խնդիրը կը յաւգեն: Սա
կայն, յամենուստէք վհատական խոս-
տովանութեան աղաղակ մի եւս կը լըս-
ուի, որ իջ միայն ազգային դպրոցնե-
րու թիւը համապատասխան չէ աղ-
գի բազմութեանը եւ կարօտութեանը,
այլ եւ եղած դպրոցներն անգամ չառ-
տխուր վիճակ ունին թէ ներթապէս

և թէ մանաւանդ բարոյապէս : Արդարեւ մի նոր սթափումն կը նշմարուի ամեն տեղ, որ կը փափաքին գլորոց բանալ, կը փափաքին ուսանիլ և ուսուցանել, բայց թէ ինչ նպատակի մէջ կ'եզերի՝ ուսման փափաքը, ինչ կ'ուսանին և ինչպէս կ'ուսուցանեն, այս մասին ամեն ինչ խառնաշփոթ է : Վրանքի, գոգցէս ամեն տեղ կը պակսին դիւրուսոյց և անդադար գասու գրքեր, բարեյարմար կարգ ու կոնոն, պատշաճաւոր ընտրութիւն և դասու կարգութիւն կարեւոր ուսմանց և գիտութեանց, բեղմնաւոր եղանակ և ուղղութիւն դաստառութեան, և մանաւանդ էական տարր մասւոր և բարոյական զարգացման, թողունք ուսել, որ դպրոցական փոքրութեան ճշմարիտ համարատուութեան և համաբաւութեան սկզբունքը բոլորովին չը կայ : Սակայն, եթէ մանրաստեղծութեանց այս խառնաշփոթութեանց աղբիւրը, ուր կարող ենք գտնել, եթէ ոչ ժողովրդի բարոյական անձեռն հասութեան և Վգգային վարչութեան տարտամութեան մէջ :

Երբոր Սահմանադրութիւնը երեւան ելաւ, թմրած և ընդարմացած հայութեան ճակատին վրայ կենդանութեան և շարժողութեան նշոյլ մի փայլեցաւ : Վերս փրկութեանց և ամեն շրթունքներէ ուրախական սուղակ մի բորձրացաւ : Հայը ողջագլուխեց Սահմանադրութիւնը խրախտական երգերով, որտառորս եռանդով և քաղցր յայտերով, թէպէտ և շատերուն համար ուրախութեան բուն շարժառիթը անձանթ էր, և շատերը սրիշ բան կը տեսնէին Սահմանադրութեան մէջ, քան թէ իսկական Սահմանադրութիւնը : Այսպէս էր ժողովրդեան մեծ մասը, որ Սահմանադրութեան նորաստեղծ ծիսածանին վրայ այնչափ

գոյներ կը տեսնէր, որչափ բաղմամբ կէին իւր իրէերը և վշտաց սփոփանաց յայտերը : Սակայն, սակաւամբ բանի մաց մասն մի եւս կար, որ Սահմանադրութեան աղեղին վրայ իւր իսկական գոյնը կը նկատէր և հայկական ազգային Վարչութիւնն ասելով, ուրիշ բան չէր հասկանար, եթէ ոչ ժողովուրդը իւր վեճակին վրայ խորհելու ճանապարհին մէջ մոռնել, իւր իրաւանց և պարտուց ընտելացնել և այսպէս օրաւուր կանոնաւորել և բարոքել ազգային կրօնական վեճակը և ժողովրդի մէջ լոյս և գիտութիւն ծաւալել կրթութեան և դաստիարակութեան շնորհիւ : Արեւմտ Սահմանադրութիւնը բանիմաստներու համարէր Սահմանադրութիւն կրօնական, բարոյական եւ մտաւոր զարգացման և ազգովին յառաջագիմութեան : Հետեւապէս, ազգային Սահմանադրութեան բուն հոգին ըմբռնողը և հասկացողը հայկական ժողովրդի սակաւամբ մասն էր, որ իւր զգայուն սրբատով և տոկուն համբերութեամբ պարտաւոր էր Սահմանադրութեան սկզբունքը և գործադրութեան որդիւնքը ընդհանրացնել Վրդի մէջ : Սակայն, իրաւ սրտի ամենեցուն, Սահմանադրութեան բուն հոգին կրքերու ծախին մէջ նսեմացաւ, դաստիարակութեան ժողովը, որ կեդրոնական համադրմանքէն զինի՝ երկրորդ տեղը պիտի գրաւէր, երբեք չը հաստատեցաւ, քանի մի ժողովներ իրարու խառնուեցան, հոգին փոխուեցաւ ինքի և Սահմանադրութիւնը՝ ումանց համար գայթակղութիւն և ումանց համար յիմարութիւն դառնալով քննութեանց և վերաքննութեանց ենթարկեցաւ : Եւ ահա այսպէս, այն քաղցր յայտերը, որով Հայը ինքզինքը կը փայտայէր և Սահմանադրութիւնը

կ'ողջագութեր, Կողբես յուսահատութեան արևուր ամպերով ծածկուեցան :

Սակայն մենք, (անշուշտ մեզ հետ և մեր սրտակիցները) որ յուսահատութիւնը թերահաւատութիւնը ճանաչենք, և բողբոլմէն համոզուած ենք, որ եթէ ժողովուրդը ճարահատութենէ ստիպուի առանց ազգային Վտրուծէ ապրիլ, դարձեալ չապիտի կարենայ ապրիլ առանց կրթութեան և դաստիարակութեան : Սենք, որ ազգային ներկայ սթափութենէն քաղըր յոյս մի կը անուցանենք, որ եթէ, Վտուած մի արասցէ, կանանաւոր ժողովները բողբոլմէն համոզանան և սպառնին, անհատները անշուշտ պիտի ազազակ բառնան, և դարձեալ պիտի ֆառուին ամեն տեղ, ամեն գաւառի մէջ, մասնաւոր անձինք, որոնք մի տեղ գալով՝ պիտի խօսին և խորհին նոր սերունդի կրթութեան և դաստիարակութեան վրայ : Երջապէս, մենք որ այս կողմէն հայութեան մէջ կենդանութիւն կը նշմարենք և ազգային պարբերականներու մէջ շատերու ազազակները կը լսենք, այս սփոխիչ յուսով նշանաւոր մատենագիրներու դաստիարակական գրուածները մեզ ուղեցոյց բռնելով և տեղ տեղ թարգմանաբար ծաղկաքաղ առնելով՝ կը հրատարակենք ահա ներկայ յոյսածը թողլէտպէն իրաւի վրայ, միակ նպատակ ունենալով մեզ՝ գլխաւորապէս բացատրել քանի մի ամենակարեւոր կէտեր, որոնք կրթութեան և դաստիարակութեան հական տարրը կը կազմեն և համեմիչ ալը, առանց որոց ուսմանքները, փոխանակ համեմեղու առաւել կը դառնացնեն ընկերական կեանքը :

Վաստի և կազաչենք մեր եղբայրները, մանաւանդ ժողովրդային կրթութեան վրայ խորհող բանագէտ

ները, իրենց զաւակաց բարեկրթութեանը փափաքող ծնողները, հայկական նոր սերունդի դաստիարակութեանը սպասաւորող խնամակալները և ուսուցիչները, որպէս զի, ուշի ուշով կարգան մեր յոյսածը, զոր ահա քանի մի կարեւոր գլխաւորութեամբ իրենց մտադրութեանը կը ներկայացնենք : Կազաչենք ուշագրութիւն դարձնել կրթութեան և դաստիարակութեան վրայ, վասն զի, եթէ մի կողմէն խորտակուած է մեր ազգային ինքնուրոյն քաղաքականութեան անօթն, միւս կողմէն ունինք այլ եւս երկու գլխաւոր անօթ ազգայնութեան — քրիստոնէական իրոյ եւ ժայրէի լեղ — որով կարող ենք մեր ազգային հուծիւնը պահպանել, եթէ ջանանք կրթուիլ և դաստիարակուիլ : Եթէ ջանանք, Շտմանեան ազատականամ Տերութեան քաղաքական հովանւոյն տակ, ընտիր ժողովուրդ մի կազմել և գեղատեսիլ հայրենիք որոյ կնիքը լինի յոյս ճատարական եփարցական իսկ մշակութեան բերքը — Գիտութիւն, առաքինութիւն և հայրենագիրութիւն :

Ե

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԲՍԲ ԲՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ

Ժողովրդային կրթութիւնը ընդհանրապէս կը սահմանեն այսպէս, այն է իմանալ իւրեալ, գրել և ստիպել խօսել կամ հաղորդել :

Իայց տակաւին արդիւնքը չքրն նա՞ծ՝ ջանանք այս երեք արուեստի կարողութիւնը կշառադատել և նոյցա յատկութիւնը պարզել :

Ինչպէս ամեն պորձնական գիտութիւն, նոյնպէս և այս երեք արուեստը բարեկեցութեան կամ երջանկութեան երեք գլխաւոր միջոցներ են :

Լ՛րդ՝ բարեկեցութիւնը կ'ամփոփէ իր մէջ բարեկրթութիւնն, փասն զի, շուհը կը կապէ կանոնաւորութեան հետ, որ ամեն օրինաւոր շահուց աղբիւրն է։ Սեպհականութիւնը, ինչպէս ընդհանուր, նոյնպէս և անհատական քաղաքակրթութեան հիմն է։ Ս'որդը կապուած է իւր աշխատանաց արդիւններուն հետ, և կը ցանկայ իւր գործոյն մէջ իւր պատիւը տեսնել։ Այս անձնական պատիւէն կը ծնանի բարեկեցութիւնը, զոր աւելի ընդարձակելու համար՝ կը կարօտի մարդը ուրիշներէն եւս յարգուիլ։ Ահա այսպէս անհատական բարեկեցութենէն կը ծնանին իւրաքանչիւր անհատի մէջ բարոյական սովորութիւններ, որոնք շահաւէտ կը լինին նմանապէս հասարակութեանը։ Ուրեմն, այն երեք արուեստները, որոնք իբրեւ բարեկեցութեան միջոցներ կրնկատուին, կը բարեկրթեն անհատները, ընկերականութեան զանազան դասակարգերը և բովանդակ ազգը կամ ժողովուրդը։

Իսկ յայտնանէ, այս երեք արուեստները կը նպաստեն մարդուն ուրիշ գիտութիւններ եւս ձեռք բերելու, իւր միտքը լուսաւորելու, իւր վիճակը կամ կացութիւնը ծանաչելու, օգտակար և վնասակար խորհուրդները որոշելու և վստահաւոր հրապոյրներուն դիմագրելու։ Սքա են ուրեմն մէկ մէկ լսպտերներ, զորս կրթութիւնը կը վառէ մարդու առջեւ իր կենաց միջին և տաժանելի ճանապարհին մէջ, Հետեւապէս, շատերը վերագրեալ պայմանները առաջի աջ ունենալով՝ կը պնդեն, որ կրթութիւնը մի ճանապարհ է ժողովրդի բարոյականութեան։ Սակայն մենք ընդհակառակը կը տեսնենք շատ անգամ, որ ամեն կրթութիւն չբարոյակրթութիւն։ Ս' ասն զի, իարդաւը, գրելը և հաշ-

ուելը ինքնին վերաբերուածին չունին ոչ պարտուց և իրաւանց և ոչ խոհեմութեան և մտախոհութեան գաղափարներու հետ։ Ամենայն ինչ կը կախի միայն այս երեք արուեստի կիրառութենէն, յորմէ և դիւրին է մալեակները, որ իարդաւը և գրելն ու խաշուելը կարող են ոչ միայն բարութեան, այլ և չարութեան գործիք լինիլ։ Առնուել օրինակի համար կարգալը կամ ընթերցասիրութիւնը, որ աւելի ուղղակի ազդեցութիւն ունի մարդու մտաց և կենաց վրայ։ Արդարեւ՝ ճշմարիտ է այն, որ կրտսի թէ՛ կարգալ իմացողը կը փափաքի աւելի կարգալ։ Իսկ այս փափաքը արդիւնաւորելու համար՝ պէտք է մատակարարել ժողովրդին ընթերցուածներ և յատկապէս բարի ընթերցուածներ, իսկ վատթարներ ոչ երբեք։ Պէտք է ժողովուրդը այն ճանապարհով կրթել, որ կարենայ ընտրել և միշտ օգտակարը և բարին նախապատիւ համարել վնասակարէն և վատթարէն։ Ս' ասն զի, եթէ մանուկները կարգալ սովորին միայն անհիւթ և կամ ապականաւոր գրուածքներ ընթերցասիրելու համար, և եթէ նոցա սիրտը այնչափ զօրացած չը լինի որ կարենայ դիմագրել սնտոի և կործանական գրուածոց հրապոյրներուն, այս տեղէն յայտնի է լուսի պէս, որ աւելի լուսէր, եթէ բնաւ կարգալ չունանէին, քան թէ ուսանէին և անբարոյականութեամբ ճարակուէին։ Ս' ասն զի, ինչ կարեւորութիւն կարգալը երթալու, քանի որ մանուկը օգիտութենէն ի մարդութիւն պիտի դիմէր։ Աւելի լուսէր, որ ազգէտ միտք, քան թէ մարդ և սուտ լոյս ստանար, որով աւելի կը թանձրանայ օգիտութիւնը, Ահա արանի վճռական խօսքին համեմատ. «Իթէ ձեր ստացած լոյսը խաւար է, ապա որչափ թանձր

պիտի լինի նոյն իսկ խաւարը ո, (Ասպ. 2. 23) : Այս տեղէն կը հետեւի ուրեմն, որ նոյն իսկ կրթութիւնը, իւր չարաչար կիրառութեամբ, կարող է շատ անհասներ թիւնաւորել : Իսկ այս աստիճան մի գուցէ կարծուի թէ մենք նպատակ ունինք տգիտութիւնը պաշտպանել : Բաւ լիցի, վասն զի, եթէ խորքաւ, գրեւը և խելը վնասակար համարենք, դարձեալ ստիպուած ենք խոստովանելու, որ անհարկն է արդիւտութեան վրայ հաստատուն բարոյականութիւն հիմնել : Արովհետեւ, բարոյականութեան իւրաքանչիւր աստիճանը իրեն համապատասխան գիտութիւն կը պահանջէ : Հագուց մը շակութիւնը կամ ազնուագործութիւնը կը պահանջէ նոյնչափ և բաւականութեւ մշակութիւն : Եթէ ընթերցումը չընդունինք, անշուշտ պիտի ստիպուինք ուրիշ միջոց որոնել բանականութիւնը և միտքը լուսաւորելու համար : Չենք կարող ասել երբեք, որ անկիրթ և վայրենի ազգերը առաւել բարոյական են քան կրթութեամբները : Բայց չենք կարող նոյն պէս սինդել թէ կարգաւ իմացող ժողովուրդները ամենն առ հասարակ բարեկիրթ են և անբարոյականութենէ ազատ : Արովհետեւ, մի երկու նշանաւոր մասնագիտներ, քանի մի տարիէն առաջ, Գաղղիայի և Ստորին Եւրոպայի եղեռնագործ դատապարտեալները վիճակագրութեան ենթարկելով՝ գտած են, որ յանցաւորաց մէջ խորքաւ և գրեւ իմացողներու թիւը աւելի շատ է, քան թէ չիմացողներունը, թէպէտ և քանի մի տեղեաց յանցաւորաց վիճակագրութիւն եւս բոլորովին ներհակն գտած են առաջնոյն : Արեւմտեան տեւտուի պարզապէս, որ ընթերցումն իրեն-իրեն չէ, այլ միայն գործի : Չենք կարող երեւակայել, որ

յառաջ քան գրչութեան՝ գիւտը մարդկութիւնը ամենեւին չէր մտածեր : Չենք կարող պնդել, որ գրչութեան միայնակ շաւիղ են կրթութեան : Բայց չենք կարող խառնել նոյնպէս, թէ առանց մարդկային միտքը մշակելու, կարելի է նորոտ սիրտը լմանել, զգացմունքները ազնուացնել և հաստատուն դործուն եռանդուն բարոյականութեւ հիմն ձգել : Երբեք թէ՛ առանց մշտածութեան և թէ՛ մտածութեամբ հանդերձ մարդը կը տանին դէպի մշակութիւն : Եթեանայն ինչ միայն կարող մըն ունի մտածութեան եղանակէն թէ արդեօք բարի է թէ չար : «Վշտաւորեք լաւ մտածել, կ'ասէ Պարսալ, վասն զի, լաւ մտածելը բարոյականութեան սկզբունքն է ո :

Արեւմտեան, այն կրթութիւնը՝ ամենեւին կրթութիւն չէ, որ կարգաւոր և գրեւ չէտ չուսուցանէր միանգամայն լաւ մտածել : Եթեանց մտածութեան կարգաւ և գրեւ լիկ մեքենայ է, որոյ կիրառութեանը անտեղեակ է ուսանողը : Հարկաւոր է անշուշտ, (մասնաւոր մեր ժողովուրդին համար, ուր մանուկ սերունդը ուղիղ մտածութեւ մէջ վարժեցու համար՝ բայց ի դպրոցէն ուրիշ տեղ չունի) միջոցն հետ ուսուցանել արդիւնքը՝ մեքենայական տեղեկութեանց հետ՝ կիրառութիւնը, և նշաններու հետ՝ նշանակեալ իրը : Հարկաւոր է մանկան միտքը կազմուրել զանազան գեղեցիկ գաղափարներով և ծանօթութիւններով, որոնք թէ՛ ուղղակի իւր կենացը օգտակար են և թէ՛ անուղղակի իւր բարձրագոյն վախճանին : Հարկաւոր է անշուշտ, որ կրթութիւնը՝ իսկուպէս կրթութիւն լինի իւր բուն նշանակութեամբ, այսինքն սպառազինէ և զօրացուցանէ մանուկը և շտեմարանէ նորա համար այն պաշարները, որոնք

կարեն զարգացնել նորա մտաւորական
կարողութիւնը և իւր մարդկային կոչ-
ման համեմատ ընկերականութեան
անդամ կամ քաղաքացի պատրաստել:
Փորձը և մասխաճութիւնը միայն կա-
րեն ասհմանել կրթութեան չափը:
Վասն զի, կրթութեան մէջ մի օրհա-
սական կէտ կայ, ուր հարկ է կանգ
առնուլ, և կամ, եթէ անյնելու է, ջա-
նալ ոտանուլ եւ շատ հեռու փախ-
չիլ: Որովհետեւ կան այնպիսի բաներ
որ ագիտութենէն աւելի մնաստակար
և մահաբեր են, ինչպիսի են գիտու-
թեան անխոհեմ կիրառութիւնները,
որով շատ մարեր կը յանգգնին այն
պիսի խորհրդաւոր սահմաններու մէջ
ոռք կոխել, ուստի երանելու ամենե-
ւին կարողութիւն չունին, և այն՝ ինչ
որ իրենք սկիզբն իմաստութեան կը
կարծեն, ոչ այլ ինչ է, եթէ ոչ սկիզբն
մոլորութեան: Ներհանուր տեղեկու-
թիւն մի աշխարհիս վրայ, պարզ գա-
ղափար մի բնութեան գլխաւոր օրի-
նաց վրայ, համառօտ տեսութիւն մի
ֆիզիքական և ընկերական յարաբե-
րութեանց ու մեր բնական երկրա-
գնդին վրայ, այո հմուտութիւնները
բաւական են արդէն ժողովրդեան
միտքը ազնուացնելու, ընդարձակե-
լու և շատ նախապաշարմունքներէ ու
շատ վտանգաւոր պատրանքներէ ա-
զատ պահպանելու: Գտուէն անար-
ժան կը համարէ այն շինականը և թա-
գաւորը, որ անտեղեակ է մարդկային
ազդի պատմութեանը: Եւ մենք նոյ-
նը կը կրկնեմք, որ ամեն մարդ պար-
տաւոր է իմանալ պատմութեան մե-
ծամեծ գումարութիւններն ու անցքե-
րը և ճանաչել մարդկութեան վատա-
կասէր ընթացից գլխաւոր վայրկեան-
ները: Ուր թողունք հապա այն ուս-
մունքները, որոնք ուղղակի մարդու
կենսիկն կը վերաբերին և օգտակար

են ժողովրդեան իւրաքանչիւր դասու-
անհատներուն: Ուր թողունք այն ուս-
մունքները, որոց առարկան ուղղակի
հոգւոյ և սրտի մշակութիւնն է, և
որոց վրայ պարտաւորուած ենք աւել-
լի ընդարձակ խօսիլ մեր յօդուածի յե-
տագոյ գլուխներուն մէջ:

Վիտենք արդեօք թէ ինչ է ժողո-
վրդական դպրոցը և ի՞նչպէս պէտք է
լինի. — ժողովրդական դպրոցը ամե-
նէն առաջ պէտք է լինի կրթարան մը
տածութեան: Վասն զի, ուղիղ մը
տածութիւնը ճանապարհ է ճշմար-
տութեան. վասն զի, ուղիղ մտա-
ծութիւնը մարդուս ամենապինդ
սկզբունքի ոյժն ու կարողութիւնն է:
Երգարեւ, կը մերժենք մենք Ուուայի
կարծիքը, որով կը սահմանէ թէ՛ մարդն
է ապականալ ինքեանի, բայց և միանգա-
մայն կը խտապանինք, որ մտածու-
թեամբ կը հասնի մարդը իւր վտեմ
արժանաւորութեանը: Որովհետեւ
այն մարդը, որ չար կը խորհի և կը
մտածէ, կարող է մոլի լինիլ, և նա, որ
չըմտածէր, կարող չէ երբեք առաքի-
նի լինիլ: Եւ այսպէս ահա, մտաւո-
րական կատարելագործութիւնը՝ բա-
րոյական կատարելագործութեան նպ-
խաշաւիդն է շատ անգամ: Սակայն
թող յիշեն ընթերցողք, որ մենք չենք
ուզեր տեսլ թէ մտաւորական կատա-
րելագործութիւնը՝ բարոյական կա-
տարելագործութեան տեսլիչ պատ-
ճառն է և կամ՝ ծնող սկզբունքը և մի-
ակ պոյմանը: Եւ չէ մեր միտքը, ինչ
պէս որ վերջը պիտի յայտնենք, այլ
միայն մտաւորական զարգացման կա-
րեւորութիւնը յառաջ բերելով՝ կը
ցանկանք ընթերցողաց մտադրութիւ-
նը մեր դպրոցներու տխուր վիճակին
վրայ դարձնել:

Նամեմատենք միանգամ՝ թէ որ
չտի խեղճ են մեր դպրոցները վերեւ

յառաջ բերած պայմաններուն նը կատմամբ : Կրթութեան բուռն նպաստակի և մեր ազգային փորձարանաց ներկայ վիճակին մէջ ահապէս անդունդ մի կայ , որ կրթութիւնը իւր արդիւնքէն կը բաժնէ : Կեր դպրոցները մեծ մասամբ երկու կամ երեք մէքենայական տեղեկութիւններով միայն կը շատանան , մինչդեռ հարկ էր որ լինէին մասնութեան դպրոցներ , ուր ամեն կողմով բացուէր մանկանց մտքը , հանձարը և սիրտը , գեղեցիկ զբոսերով , ուսումնարանական անձանց բարի օրինակներով , ուսուցչաց բազմահայեաց հմտութեամբ , որոց խոսկական կոչումն է առաջնորդել մարդկութիւնը դէպի մասնութեան աշխարհը և դէպի ընկերական կենաց թատրոնը : Երբոր այս ամեն պայմաններուն հետ մեր դպրոցներուն վիճակը կը պատկերացնենք մեզ , խորին տրուածութիւն մի կը ախրէ մեր սրտին : Վասն զի , շատ անգամ պատահած է մեզ , որ ուրախութեամբ այցելութեանց քանակէնք այս ինչ կամ այն ինչ դպրոցին և խորին թախծութեամբ ու զսպելով մեր արտասուքը՝ ելած ենք դպրոցէն , ուր բացի լոկ մեքենայականութենէ ուրիշ մասնարական շարժումն չենք նշմարած : Կենք համարուած ենք , որ այնքան մեծ ցաւ չէր լինիլ զգայուն սրտերուն՝ ազգային դպրոցաց թուոյն նուազութիւնը , եթէ գէթ եղածներուն մէջ կրթութիւնը իւր բուռն նպատակին դիմէր , որ է ճարտիկ պատրաստել : Եզգին համար : Իայց ինչէն է , որ չենք ջանար մարդիկ պատրաստել . — որովհետեւ նոյն իսկ մարդկային յարգը և պատիւը տակաւին կը պակսի մեր մէջ : Իսկ իրը թողած՝ անուն և երեւոյթ կը փնտրենք : Հոգին թողած՝ ձեւերու կը հետամտենք , Կեր հայերու թե-

թեւամտութիւնները և թերութիւնները կշտամբելով՝ կը ծափահարենք և կը ծիծաղինք , և մենք արդէն տեսակ մի թեթեւամտներ ենք : Ինչեթեւա միտ ենք մեր խորհրդոց մէջ . թեթեւամիտ ենք մեր գործառնութեանց մէջ : Ինչհանուրը մեզ համար մեր անձն է . ազգային գործառնութիւնը՝ մեր եսականութիւնը , և հաստատունը՝ նիւթականը : Կակայն , այս անուրանալի է , որ ընդհանուր առուելէ քան մասնաւորը կամ անձնականը , հոգին առաւել է քան մարմինը , ըստ որում՝ մէկը նպատակ է , իսկ միւսը գործիք : Երբ պիտի յեղափոխի մեր վիճակը և ո՞վ պիտի յեղափոխէ , եթէ ոչ կրթութիւնը , օրինաւոր կրթիւնը , որ միայն կարող է լայնել ընդարձակել մեր միտքը և սիրտը , ծանուցանել մեր բարձր կոչումը և ուսուցանել մեզ , որ մենք , փոշոյ որդիներն , միանգամայն ժառանգ ենք երկնքի և ժառանգորդ աստուածութեան :

Ուրեմն թողունք կրթութեան բուռն նշանակութիւնը և յատկութիւնը , զոր կարծեմ թէ բաւականին բացատրեցինք , և խօսինք այժմ այն արդիւնքներուն վրայ , զորս կրթութիւնը կարող է մատակարարել ժողովրդին :

Հարեւադէպ յարգը թողու

Հեռեւեալ յօգուածը , որոյ նպատակն է պարունակած հարցաքննութեանց նկարագրով փորձիկ ճաշակ մի տալ կրթութեան կենդանի և արգասաւոր եղանակին վրայ , զրկուած է մեզ Իւրինէն հրատարակութեան ինքրանօք : Ուստի և մենք նոյնութեամբ կը ներկայացնենք ահա մեր արգոյ ընթերցողներուն :

ՀԱՐՑԱԲԱՆՈՒԹՒՆՆԵՐ ՊՈՏՍԴԱՄՈՒՄ (1)

Հարցաքննութիւնները եղան հըրատարակապէս երկու տղերանց վարժարաններում եւ մի աղջկերանց : Հարցաքննութիւնների մասին յայտարարութիւնը մի քանից օրից առաջ տպագրուած էր արդէն օրագրներում, որոնցով և հրաւիրուած էին թէ՛ երեխաների ծնողները և թէ՛ միւս ներկայ գտնուելու ցանկացողները, որոնց կարգումն էի և ես, հրաւիրուած Վարժարանի Խորհրդականից : Վարժարանները ստորին կարգի լինելով՝ երբէք չէի կարող առաջուց երեւակայել մի այնպիսի յառաջագիմութիւն, որին անձամբ յետոյ տեսներու արժանացայ : Այս յառաջագիմութիւնը և մատաղահաս երեխայների այն պիսի յաջողակ ու աչքաբաց պատասխանատուութիւնը հրաշք չէ, այլ մեծ հոգացողութեան կարօտ է հոգաբարձուների, վերատեսուչների եւ վարժապետների կողմանէ : և հոգացողութիւնն էլ իրա կարգում կարօտ է ըստ մեթոդի, ըստ ձեւի, որ ակներեւ երեւեցաւ այս հարցաքննութիւններում : Առաջի մի քաղցր պարտաւորութիւն զգում եմ յողուածովս նըկատելու հարցաքննութիւնները, որոնցով զխաւորաբար ուշադրութիւն դարձնելու այս վարժարանների բոլ-

նած մեթոդի վրան գէթ վայր ի վերոյ, որոհետեւ հեռաւոր նկատողութիւնը մի առանձին գրքի նիւթ է :

Հարցաքննութիւնը սկսուեցաւ առաջ տղերանց այն վարժարանում, որը մի քիչ բարձր է : Այն մեծ դասիկ ձուժ բաժանուում էր բազմաժան երեւեսեի հարցասէր ժողովուրդը աշակերտների խմբից, որը կանգնած իրան համար առանձին՝ վարժապետի նշանին էր ստատում : Այդ նշանակեալ ժամը լրացաւ, առաջ կանգնեց վարժապետը և միայն սկսելու նշանը տուաւ, առանց առաջնորդելու : Իսկայն համաձայն ներդաշնակութեամբ երգեցին աշակերտները առաջ հոգեւոր և ազատագրային երգեր : Արտք այնպէս վարժուած էին, որ ամենեւին կարեւորութիւն չկար ոչ առաջ սկսելու և ոչ վիճելով (գործի երաժշտական) շարու նակաբար առաջնորդելու : Ամեն երգ երգւեցաւ բերանացի և ամէն աշակերտ ճշգրութեամբ իրան նշանակուած նօտին հաւատարիմ մնաց մինչեւ վերջը : Արտք երգերում վարժ լինելը աւելի զգալի էր տղերանց մի փոքր ըստորին վարժարանում, ուր վարժապետը հարկաւոր էր համարել ցած կամ հաստ ձայնի համար արհեստաւորներ հրաւիրել, և երբեմն ապէս երգ սկսելու ժամանակը, ինքն էր ձայնով նօտը վերառնում : Շնայելով այս համեմատութեան՝ շատ բաւաւ կանացուցիչ էր որանց երգերն էլ՝ այցաւելի քով էին մատաղահաս Վերամանկիքը, որոնց միայն նօտը վիճելով ատլիս էր վարժապետը, այնուհետեւ իրանք քաղցր ձայնով սկսում և ճիշդ եղանակով շարունակելով՝ զարթուցանում էին մի բաւականաշուցիչ գահունակութիւն ունկնդիրների սրտում : Արգելը միշտ տեղ ունէին հարցաքննութիւնների սկզբնե-

(1) Պատգամը կէս ժամով (երկաթուղով) հեռի մի Պրոսպեկտան քաղաք է, ուր կենում էր Պրոսպեկտան թագաւոր Ֆրիդրիխովմանը, որի պալատը այս տեղ և նմանապէս Սան — Սուրի (անհոգ) առանց պարտեղ ձանապարհորդների այցելութեան արժանի են : Արտք մանրամասն նկարագրութիւնն էլ քանակազօղ կարող է գտնել Բեդեկեր անունով ձանապարհորդի գրքում : Գերմաներէն կամ Ֆրանսերէն : Քաղաքիս օդի բարեխառնութեան և տեղեկացրելու գրութեան համար Բեդեկերից մասամբ աւարանայ են ընտրում այստեղ :

բումը և վերջերումը. բայց երբեմն էլ միջոցներումը, երբ մի դասատու- նը աւարտած, միւսն էր սկսում:

Հարցաքննութիւններումը առաջին տեղն ունէր միշտ կրօնը: Տղերանց վարժարաններումը անց էր կացել վարժապետը մի ընդ հանուր տեսու- թիւն կրօնի, համառօտաբար Հոսի մէական և Յունական և մանրամաս- նաբար 1 ուտերական դաւանութեց: Վարժապետը մտածած հարցը առա- ջարկում էր բարդ աշակերտների խրճ- բին, և հարցի պատասխանատուութե- պատրաստ աշակերտները ձեռքերը բարձրացնելով նշան էին տալիս, և ա- պա վարժապետը առանձնապէս իր կամեցած աշակերտին թուրադրում էր պատասխանատուութիւնը: (Ետարա, կոյս այս ձեւի հետեւանքն է աշա- կերտի միշտ ուշադիր լինելը վարժա- պետի հարցմանքին, որ գլխաւորն է վարժապետի խօսակցութեան ժամա- նակը: Իւրաքանչիւր աշակերտ աշխա- տում էր մի քանի խօսքերով իր պա- տասխանը, որչափ կարելի է, պարզ յայտնելու: Եթէ ոչ հարցը ուղղու- մ էր միւսներին, Հարցերի և պատաս- խանների շատ պարզ, բացայայտ և կարճ պարբերութիւնների արգիւնքն է, որ, կարողութիւն է տուել այն- պէս մատաղահաս երեխայներին այն- չափ բաւականացուցիչ կերպով ըմ- բռնել ընդհանուր կրօնը, որից շատ անգամ շատ հոգեւորականներ, առա-ւել մերոնցից, զուրկ մնում են: Այս- պէս էր ամեն տեղ ամեն աւարկայի հարցաքննութեան ժամանակ: Սա- տաղ Վերմանուհիքն էլ մի և նոյն ձե-ւով միայն սուրբ Ղրքի պատմութիւ- նով ունկնդիրներին անջափ միութա- րութիւն և ուրախութիւն էին բղ- գացնում, զգուշութեամբ նկատելով Վատաւանային նախախնամութիւնը

Իտայէլեան նախահարց պատմութիւ- ներումը: Իսկ իրանց դաւանութիւր գլխաւորապէս գրաւել էր ինչպէս ա- մենին, նոյնպէս և այս Վերմանուհի- ներին:

Վերմաներէնը, որ իրանց մայրենի- լեզուն է, մեծ տեղ ունէր կրօնից յե- տոյ: Տղերանց վերին վարժարանու- մը ընթերցեցաւ մի ոտանաւոր Շիւ- լերից և հետ զհետէ էլ քանիցս կրկ- նըւեցաւ զանազան հարցմանքների բացայայտութեան պատճառով: Վար- ժապետը առաջ հարցրեց ոտանաւորի բովանդակութիւնը և հեղինակի գի- տաւորութիւնը նրանում: Եւտոյ թէ- քանի տեսակի գրւած կոյ, այսինքն ոտանաւոր և ընդարձակ և թիչ է իւ- րաքանչիւրի պայմանը, և այն: Այս- պիսի նկատողութիւններից յետոյ՝ ըս- կըւեցան քերականական կանոնները բացատրել: Մի խօսքով, այս մի ոտա- նաւորի վրայ լուծւեցան համառօտա- կի թէ ճարտասանական և թէ քերա- կանական բարդ կանոնները: Արեմն- պիս մի ոտանաւորը մի և նոյն ժամա- նակ այնպէս մատաղահաս Վերմանա- ցիների համար այն էր, ինչ որ մեզ համար ըստ մեծի մասին, հաստատա- տոր Վգանց ճարտասանութիւնը և Սա- լանթեան կամ Չափեան քերականու- թիւնները: և այն զանազանութե, որ նրանք իրանց այժմեան ամերիկն հաս- կանալի լեզւով (1) այս կանոնները ու- սանելու համար գործ չէին գրել ան- գամ մեր դորձադրած ժամանակի քա- ռորդը: Տղերանց ստորին վարժարա- նումը ընթերցեցան մի քանի պար-

(1) Այս համեմատութիւնը առանձին վերաւած ձեւը չէ, որովհետեւ մեր սովորում էր ուրիշ լե- ջու, որ է գրաբաւը, իսկ նրանք իրանց խօսու- լեզուն, բայց պոփեւտեւ և գրաբաւը իրան տեղ չգտահանելով մեր այժմեան խօսու- լեզուն տեղն էլ է բաւարար մեր վարժարանում, այս պատճա- ւով ձեռք բնութեւն է:

բերութիւններ մի ընդարձակ շարա-
գրութեան և ապա նոյնպէս մի քանի
ճարտասանական և յետոյ մանրամասն
քերականական կանոնները վարժապե-
տի հարցմունքով լուծեցան : Ըս-
հասարակ աշակերտների պատասխան
ները մի առանձին սեպհականութե-
յան տիպով հաւաստեացնում
էին, որ այս կանոնները նրանցում
պինդ արժանացած են : Ըսելի գեղե-
ցիկ և ակորժելի էր լեւ մաստաղ
Վերմանուհիների լեզուն : Սրանք ոչ
թէ միայն աշխատել էին առանց քերա-
կանական սխալանաց խօսելու, ինչպէս
ամեն տեղ, այլ և պարզ հնչելու իւ-
րաբանչիւր տառ և վանկ, որի կողմա-
նէ գրականական լեզուն բոլոր Վեր-
մանացւոց քաղաքների բարբառներից
շատ ու քիչ զանազանուած է : Սրանց
միջից շատ քիչը կար 10 տարեկանից
բարձր, բայց սրանց լեզւի հարցաքնն-
նութիւն ու գերազանց պատասխա-
նատուութիւնները մէկ կողմ դնելով
և քաղաքի բարբառը համեմատելով
սրանց խօսուն լեզւի և իրանց հասա-
կի հետ, ակներեւ տեսնելի էր թէ՛
ինչ մեծ աշխատութիւն և ջանք է
գործ դրւած նրանց այն աստիճանին
հասցնելու համար :

Ըմենեւին պակաս չէին հաշէբա-
նութեան հարցաքննութիւններն էլ :
Խնդիրները տարւոց յետոյ՝ չէր տե-
ւում երկու րոպէ, որ վարժապետը
ծափ հարկանելով նշան էր տալիս պա-
տասխաններ (պահանջելու : Սրանք
վարժած էին, որչափ կարելի է, ա-
ւելի մտքումը լուծելում և այս պատ-
ճառով սեւ տախտակը գործ էր դը-
նում միայն բազմաբարդ խնդիրների
համար : Իւրաքանչիւր չափակերտ տը-
ւած խնդիրը առանձին լուծելուց յե-
տոյ՝ բարձրացնելով ձեռքը իրա պա-
տասխանատուութեան, ցանկութիւնը

յայտնում էր : Շատ անգամ պահան-
ջում էր պատասխանատու աշակեր-
տից խնդրի լուծման ձեւը և շատ ան-
գամ էլ դժւար ձեւով լուծումը ար-
համարհելով՝ պահանջում էր հեշտ
ձեւով, Ըստ խնդիրները ուրիշ բար-
ձր բաներից չէին առնւած, այլ շատ
հասարակ տառատուրներից, որոնք ա-
մեն օր պատահում են հրապարակնե-
լումը : այսինքն կարտօֆելի (գիտնա-
խնձորի) և ուրիշ այսպիսի բաների ա-
ռուտութիւնը : Ի հարկէ մտածելի է
անպատճառ, որ երեսայները մեծ
տխորժանքով սովորած են իրանց հետա-
քրքրութիւնը շորժող առտնին բանե-
րի հաշիւների և սրանցով իրանց սեպ-
հականած թուարանութեան խիստ
կանոնները : Ըստ տեղ թուարանութիւն
ոչ թէ չոր էր, այլ ամենից զուարճա-
լին, որ շատ անգամ խստութիւնը պահ-
պանելով՝ մանր մասերի ետեւեցին էր
ընկնում և երեսայների ծիծաղն էլ
շարժում :

Սի ամենապուրաճաղի և պղտիկ
հասակի համար շատ արդիւնալից տե-
սարան էին ներկայացնում այսպէս ա-
նուանուած հայելի կարգադրութիւնները՝
տղերանց ստորին և աղկերանաց վար-
ժարանում : Ըստ հարցաքննութիւն
ները եղան տարւոյ չորս եղանակին
համեմատ նկարագրուած քարտէզնե-
րի վրայ : () ընծակի համար, աշնան
եղանակի քարտէզի վրայ նկարագրե-
ուած էր գիւղ, այգի, դաշտ, ծառա-
տունի գեղին տերեւներով, արօտ և
ուրիշ շատ բաներ : Վարժապետը
հարցնում էր թէ՛ ինչ է ցոյց տալի մեզ
այս քարտի վրա, տարւոյ եղանակների
բաժանմունքը և ուրիշ բաներից յե-
տոյ՝ գիւղականի կեանքը, նրա վարու-
ցանքը, մի խօսքով նրա բոլոր զբաղ-
մունքը և կենսական ապրուստը, եւ-
այլն : Ըստպէս մի հասարակ ձեւով

աչքի առաջ ներկայանում էին բոլոր ժողովրդի կեանքը : Այստեղից պիտի երեւակայիլ թէ ինչ ձեռք օգուտներ ունին այս դասատուութիւնները երախայներին համար և որ աստիճանի բայ են անում նրանց միտքը աշխարհային կեանքի մէջ մտնելու , բան հասկանալու և գործ կատարելու : Այսպիսի դասատուութիւնները մի կողմից երախայներին համար շատ հետաքրքրական են , շատ ու քիչ իրանք էլ տեսած և իմացած են , և միւս կողմից այս բաները անպատճառ թէ օրեօրեայ քական դատեր են պրակտիքական կեանքի մէջ նրանց համար :

Ինական գիտութեան անունով հարցաքննութիւնն էլ մի պարզ ու թեթեւ ձեւ էր ստացել աղջկերանց վարժարանում : Այստեղ միայն ջերմութեան վրայ էին եղած դասատուութիւնները՝ աւելի մերձակայ և ընտանեկան բաներին յարաբերելով : Ս'էկ կողմ թողնելով այն բազմահատոր գրքերը , որոնք ջերմութեւ վրայ

են գրւած մտթմառիքական խիստ հաշիւներով երեւելի հեղինակներից , Վերմանուհիքը բուականացել էին առձեռն նկատմամբ միայն ըմբռնել , թէ՛ ինչպէս է դպալի ջերմութիւնը , նրա չափիք , մարմնայ մէջ տարածւելու յատկութիւնը և ուրիշ շատ նրման հարցեր , որոնց լուծողի պատասխանները յերաւի շատ բաւականացուցիչ էին նրանց դրութեան հետ համատեղելով : Այսին ուրիշ առարկայներից էլ հարցաքննութիւններ , որոնց ես ձեռնհաս չ'եղայ ներկայ գտնւելու :

Այն համառօտ իմ տեսած հարցաքննութիւնների նկարագիրը , որ ներկայացնելով պատուելի ընթերցողներին , համարձակում եմ փայտայել ինձ յուսով , որ մեզանում էլ աշխատելու է աւելի պարզ և նպատակի յարմար ձեւով զբաղեցնել մատաղ սերունդը :

Սիւսա Սիւրբանյ

է Հոկտեմբեր . 1 . 1868 .

Իւրէն :

ԹԱՌԱՅԱՆ ԳԵՆԴՈՒԹԵՍՈՒՆ

Թող այս խառն արեւ քղած առիւ արշաւն
հասնի ամեն մեկուր պանդոխտ իմ Հայկազանս :

Չմեռն հատեր-եւ ես յերկիր մ'ընկած օտար ,
Չեղ կը մտածեմ պանդուխտ եղբարք իմ վշտահար ,
Ըրդեօք ձեզ ալ ձեր հարց նման գերեզմաններ ,
Օրածկեցին շուտ յօտար երկրի անոք անտէր :

Օրս հալածանք անապորոյն մեր թնամեաց ,
Հուրն ու երկաթ վարեցին դուրս 'ի Հայրենեաց ,
Եւ կամ բաղդի մրդիկն հասաւ ըզձեզ խրեց ,
Ինչպէս թաթառ խրէ զծառն բարձրաբերձ :

Արցիւր ու ցան անապատներն սեւ սարեր ,
Օտար քոյներէն դուրս ինկած խեղճ աղաւնիներ ,
Շրջիք թափառ , չունիք դադար ու ոչ հովանի ,

Մինչեւ գլուխնիդ հանդիսի ՚ի բարձ գերեզմանի :
 Իհար հառաչանք արձակէիք ձեր սրտերէն ,
 Որոտածայն , ով խեղճ Հայեր , իբր ամպերէն .
 Երբ դողդոջուն ձեռքով որդայն ձեր մէկ հատիկ ,
 Ի հող օտար բզգերեզման կը փորէիք ,

Քան զայլերց ջուր կ'առատանար ձեր արձունքներ :
 Հայոց մայրեր , երբ սիրատուն ձեր զաւակներ ,
 Բարբարոս ձեռք մը կը խլէր ձեր սուրբ ծոցէն ,
 Իբր զկական վարդի խլուած վարդենիէն ,

Եւ յաղաղակն անմեղ աղայոց որբ մնացած ,
 Որոնց չորս կողմ լեռնակուտակ աղէտք գիլուած .
 Ուր մայրենի չ'ունին իրենց պարիսպ ծոցոյն ,
 Ինչպէս ձագերն կորուսանեն մօրերնուն բոյն :

Եւ յուռական օրիորդաց սեւ աշուշներ ,
 Որ մարդարափ պէս թափէին սուրբ կաթիլներ .
 Երբ անսուրբ շունչ մը շուրթերնուն կուգար վրան ,
 Կանցնէր ինչպէս ծաղկանց վրայ խորշակն ամուսն :

Եւ յուսահատ ձեր կողկողանք հարս ու փեսայ ,
 Երբ ձեր զանլուծ սրտերնուդ կապ սուրն անխնայ .
 Կորէր նետէր մէկըդ հիւսիս մէկդ ալ հարաւ ,
 Ինչպէս ջուխտակ շուշան խլուած սուր գերանդեաւ :

Եւ յանգադար եղերական ողբ եւ լացեր ,
 Որով զօտար հող թրջէիք , պանդուխտ Հայեր .
 Ձեր անձկալի հայրենիքէն հեռու քշուած ,
 Ահ , տարածամ մեռանէիք յոյսէ զրկուած ,

Ըրդ ձեր բարբ կորուսան անբաւ ու զրկանքներ ,
 Հոտել կուտան մեզ անդադար դառն արձունքներ .
 Որչափ ողբանք ու հառաչենք անկարեկիր ,
 Մեր փշտացեալ սրտի մարմնք չըհանգարտիր :

Չէր հուրն ու զուր այնչափ կարող ձայն սպառել ,
 Որչափ գիտէ պանդխտութիւնն ջարդել վատնել .
 Ձեր սրմատին կենսական հիւթն չորցուց խապաւ ,
 Յրուելով միշտ զձեզ տարագիր աստ անգ թախաւ :

Ահ , ձեր արիւն այդ բոցավառ Հայու արիւն ,
 Օ , որ հայրենայն ձայնն էր վառսկն դէմ թշնամւոյն .
 Ո՛վ կարծեր , ո՛վ , թէ ՚ի պիղծ տիղմ օտար երկրի ,
 Սառնամանեաց մէջ թափելով սիրտի մարի :

Ահ , ցան և ցիր գէզ գէզ Հայոց քաջ սակորհեր ,
 Որ անձանոթ անայցելու Լիք խորշեր ,
 Չհղաւ մէկն որ համբուրէ ձեր շիրմաց սուրբ հող ,
 Չհղաւ մէկն որ Հայ արցունքի թափէ մի ցօղ :
 Որ շունչ առնէր ձեր գարերով ջրուած ոսկերք ,
 Կենդանանար եւ բուժէր մեր վահայոս վէրք .

Սառնայինք ցաւերն անցեալ վիշտ ու կսկիծ ,
 Գառնար գարուն մեր ազգութեան պերճ ծաղկալից ,
 Հայրեր , մայրեր , իմ եղբայրներ , ազնիւ քայրեր ,
 Ընա ես ալ ձեզ պէս օտար անկիւն մ'ընկեր
 Ձեզ պէս քշուած Հոյաստանէն դուրս անժառանգ ,
 Չունիմ երբեք յոյս մը որ լուսի հոն արծառանք :
 Բայց արձունքն իմ աշուշներս ալ խիստ ողորդէ ,
 Ձեր հառաջանքն իմ սրտիկս ալ կը տոջորէ .
 Եւ իմ ճակատ զձեր մահուան թափէ կայլակ ,
 Գեռ չըլիջաւ ձեր սրտի հուրն եւ իմ կրակ :
 Ո՛հ , լեցէք , մուծ հոգերէդ խղզուկ այս ձայն ,
 Հայեր , ուր ալ ընկած ծնաք , յօտար գամբան .
 Ո՛հ , այս եղբօր ձայնն է , որով ըզձեզ կ'ողբայ ,
 Ո՛հ , թշուառիս արձունքն է որ ձեր հոգ թանայ :
 Ո՛հ , չէք մոռցուած յոր եւ անկիւն մեռայք երկրիս ,
 Սայրն Հայաստան սիրտն ՚ի տագնապ խնդրէ զօրդիս ,
 Ձե զուր թափուած ձեր ջերմ արցունք , հայրեր , մայրեր ,
 Ձեր սուրբ շնչով կենդանական Հայոց սրտեր :
 Խող այս թառաշ սրտէս բղխած ւաղի արցունք ,
 Հասնի ամեն մէկուդ պանդուխտ իմ Հայիազունք .
 Հալեցընէ ձեր շիրմերուն սառայց եւ ձիւն ,
 Ու միշտ սիւռէ կենսափթիթ մեզ նոր գարուն :

Յ. Ս. Կեօքիւսեան :

ԿԱՐՃ ԶԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՅԱՍՈՐԻՍ .

(Հարունակութիւն եւ վերջ , տես թիւ 9 .)

Իւղատունը կանգնած արձանի մի վրայ . Երտուած անմահ եւ անվախճան որ ստեղծեաց մարդ բանական , ետուր նմա ցուպ հովաւական հովու եւ զհօտս տիրական . բարձող խաչին տէրունական որպէս մեծին Ստիվէսին այն , զձոյն պատառելով աղատեցոյց զամենեւեան գերագոյն դու գովելի , նման արթնայն Գրիգորի , շարժարանօք նա խաչու կցեալ անմահ բանին Տեառն Յիսուսի . դատաւորն երկնաւոր տէր կացուցեալ զքեզ ամենայն քաղաքի , եւ տուեալ

քեզ բան քաղցրալի . Տէր Խաչատուր հայրապետի , ընդունարան հոգւոյն շնորհաց , այն որ ի վերնատունն հընգեաց , զառաքեալն զարդարեաց զընդարձկան սարք կոչեաց , համբերուած թան դու հետեւման որ առաւել քան զՅորայի , բոս հրամանին տէրունական , որք համբերեն , խաչաւ կենան ճշմարիտ ճանապարհին դու մարգարիտ դատիւ անգին , եւ լաւ ունար խոնարհութիւն , որ երեւեալ ի քում ոնծինգ , լյոն ի հօրէ զքեզ զարդարեաց , զքեզ բաղմաց աղ տնուանեալ քաղցր համով ի համ ամեալ , ուր ի յերկինս հրաւիրեալ , խոստովանող եւ դու արի տեսան խոստեց Յիսուսի

Վրիստոսի, յորժամ կանգնեալ յեկեղեցի հնչեալ ձայնիւ գ բաղձալի, ծածկեալ խորհուրդն Նստաւածային, յոյտնեաց մարտըր Կարապետին, դու նմանեալ այն Երեսխին որ զգեցաւ զսուրբ հոգին, մարտըր հոգւոյն ընդունարան քան զՆովհաննէս առաքեալն այն, նա զօրացեալ Հոգւով սրբով անմեղ մնայ անապական, Յիսուս որդւոյն սուռն և անգի, որ հաւնապաղ ի քեզ հանգչի, նորին շնորհւաշխարհ ւարի, փառասորութիւն վերառարի, շնորհատուն ողորմութեան Յիսուս Վրիստոս անմահ արքայն, մեք ակն ունիմք առ նա յուսով զի դատեալցէ յաջակողմեան, ոսկիաքան Յովհաննէսին, դու համեմատ գոյով նմին, շատ չարչարեալ նա արարի, հանգեաւ խորանն անմատուցին, Տեառն աստուծոյ դու ժիր մշակ, ուղիղ վարուք դու և արագ, զեկեղեցիս նորոգեցեր և արարեր որպէս դրախտ։ Վրիստոս անմահ սուրբ թագաւոր, որ է օրհնեալ ընդ հօր հոգւով։ Ես չար մարտս առ նա յուսով, որ ասացի քովս այս գունով այս է տապան երաժշտին, տէր խաչասուր հայրապետին, որ և հանգեաւ ի մեծ թուին հայոց յէկե (1069) Վրիստոս Նստաւած տէրդ վերին, հոյցման կուսին քո ճեղքին, պաղատանք սուրբ քառասնիս լուսաւորեալ զհոգիս սուրին, ամէն ։

Եւս երկու եկեղեցին վեց քահանայ սենին որք ժողովուրդը հոգեւորապէս կը մխիթարեն, վիճակը Սրայ վանքին թէմն է, ունի նաեւ անշարժ կալուածներ, որոց տարեկան մուրքը 400 լիւրայ կը հաշուեն։ Եւս գումարը եկեղեցւոյ, դպրատանց և առաջնորդապանին կարեւոր պիտայքը կրնան հոգալ, բայց ի բարեպաշտ ժողովրդաց հոգեւոր նաւերնէն։

Սուրբ Լիւդաւաղէմի հոգեւորանալ

դարձեալ հարի էլ ասլի կոչուած թաղըն է, կառուցեալ բարեյիշատակ Ղըրիգոր պարոն տէր կոչեցեալ Պատրիարքէ սրբոյ Լթոռոյս, և յետոյ կրկին նորոգեալ այցելութեամբ շղթա յախիր հոգեւոր Ղրիգոր Պատրիարքի, ցամաքէն ճանապարհորդող բարեպաշտ ուխտաւորոց հանգստութեան համար։ որուն բնական նկարագիրը այս է։ Սենիակ դռնէ մի ներս մանելով ընդարձակ և յատակը սալած քաւիթի մի կ'առաջնորդէ, որուն մէջ անդն բարեհամ ջրհորը և լիվանը, ուրուն վրայ եղած արձանագրութեան օրինակը հոս կը գնենք։ « Եւս նորոգեալ լիվանս կրկին, հազար հարիւր ութսուն հնգին, յառուս Ղրիգոր Պատրիարքին, ձեռամբ նորին գանձապետին, իսկ մասնաւոր նորոգս վերջին ըռաֆ ըռաֆիս սոյն լիվանին, հազար երկու հարիւր և երկուքին, յառուս թորոս Պատրիարքին եւ առաջնորդ վարդապետին Սեբաստեան Վաբրիէլ դիտին, ջանիւք Սաշկերոցի գանձապետին տէր Լարսահմեան Պողոս դրաքին, և գծողիս երկաթագրին, Յակոբ երիցու որդի Սանտին, որք հանդիպիք սոյն արձանին, տէք Հայր մեր և զարմի ։ Սրահին չըջապատը շինուած է կրկնայարկ եւ գեղեցիկ քարուկիր սենեակներ 32 թուով որոց ամեն մէկուն դռներուն վրայ հայկական տառերով յիշատակարաններ գրուած է, և քաւիթն որմին մէջ տեսնուած արձանագրութեան օրինակը։ « Թուին յՃՏԷ (1175), առաջնորդութեամբն Նստաւծոյ Ես Ղրիգոր անպետ վարդապետ, Պատրիարք սուրբ Լիւդաւաղէմոյ եկի քաղաքն Հալիպ, անսի հագետունս վախով արարեալ և շինեալ ի Ղրիգոր պարոն տէրէ, և էր հնալցեալ, Նստաւծով նորոգեցի խցերօք և օտաներօք վերատին պայծառացուք

